ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-23/10 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով բաց մրցույթով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ՀՀ ՊԵԿ-ում ներդրված «Հարկային կարգապահության ռիսկերի կառավարման համակարգ»-ի սպասարկման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 07.12.2023թ. N 499/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 18.01.2024թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ս.Պատուրյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Ավետիսյանը, Լ.Այվազյանը, Ա.Խաչատրյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Հանձնաժողովի անդամ Հ.Նաջարյանը բացակայում էր նիստից:

1. Հայտերի ուսումնասիրության արդյունքների մասին

-Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-23/10 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի հայտը, արձանագրեց՝

«Դանիամ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, հրավերով նախատեսված ոչ գնային պայմանները սահմանող չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

-«Դանիամ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

2. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի հրավերով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման չափանիշների մասին վերաբերյալ

1. «Դանիամ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հրավերով նախատեսված ոչ գնային պայմանները սահմանող «Մասնագիտական փորձառություն» և «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

2. Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ոչ գնային չափանիշները գնահատվել են հրավերի 2.4 կետի համաձայն:

Գնահատման չափանիշը	Առավելագույն միավորը	Մասնակիցների անվանումները
		«Դանիամ» ՍՊԸ
Մասնագիտական փորձառություն	35	35
Աշխատանքային ռեսուրսներ	35	35
Ընդամենը	**70**	**70**

3. Գնային պայմանը գնահատվել է հետևյալ կարգով՝ համաձայն հրավերով սահմանված բանաձևի:

Գնահատման չափանիշը	Առավելագույն միավորը	Մասնակիցների անվանումները
		«Դանիամ» ՍՊԸ
Գնային պայման	30	30
Ընդամենը	**30**	**30**

Ընտրված մասնակից է ճանաչվել այն մասնակիցը, որին տրված գնահատականների հանրագումարն (ՄՓՄ + ԱՌՄ + ՖՄՄ) ամենաբարձրն է:

	Մասնակիցներին տրված ընդհանուր գնահատականը (ՄԳ)
Հ/Հ	**Մասնակիցների անվանումները**
	«Դանիամ» ՍՊԸ
1	**100**

3. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հաշվի առնելով, որ «Դանիամ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված ընդհանուր գինը՝

1. «Դանիամ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
2. Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Դանիամ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «Դանիամ» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ս.Պատուրյան

Անդամներ՝ Ա.Ավետիսյան

Լ.Այվազյան

Ա.Խաչատրյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան